ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԲԸԱՀԾՁԲ-10-2-4 ծածկագրով առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մարտի 13-ին կնքված N ԲԸԱՀԾՁԲ-10-2-4 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի հուլիսի 1-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պատվիրատուի մոտ առաջացել է Պայմանագրում նոր բաժանորդներ ավելացնելու անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և Պայմանագրի N 2 Հավելվածով նախատեսված «Բաժանորդ ՀՀ ՊՆ զորամասերի» ցանկում ավելացնել ներքոհիշյալ օգտվողներին.

Հ/հ	Զորամասի համար	Տեղակայման վայր	Քարտի համար
1	69334	Գուսանագյուղ	402721154
2	Զկ Գյումրի	Գյումրի	402728900
3	Զկ Ամասիա	Ամասիա	402717640

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

N ԲԸԱՀԾՁԲ-10-2-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **01.07.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության միջազգային գլխավոր տնօրենի SS Վ. Մարտիրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 13.03.2014թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ-10-2-4 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և Պայմանագրի N 2 Հավելվածով նախատեսված «Բաժանորդ ՀՀ ՊՆ զորամասերի» ցանկում ավելացնել ներքոհիշյալ օգտվողներին.

Հ/հ	Զորամասի համար	Տեղակայման վայր	Քարտի համար
1	69334	Գուսանագյուղ	402721154
2	Զկ Գյումրի	Գյումրի	402728900
3	Զկ Ամասիա	Ամասիա	402717640

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ ք.Գյումրի Դուդկոյի 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱՇԻԲ» Գյումրիի մ/ճ
ՀՀ 900011144079	ՀՀ 247260005555
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	ՀՎՀՀ 05531223
ՆՏԱ դեպարտամենտի պետ	միջազգային գլխավոր տնօրենի SS
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ